Ը. ՏԱՐԻ　　ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ՆՈՅԵՄԲԵՐ 1905　　ԹԻՒ 764

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բուլղարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի
համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 »

Յանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'լլայ:

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Բուլղարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Պոլսից զանազան թերթերի հեռագրում են որ երիտասարդ թուրքերը մի յայտարարութիւն են ցրւել, որով կառավարութիւնից պահանջում են հայ կոմիտաններին պատժել, եթէ ոչ իրենք էլ կսկսեն ռումբերով կոտորել հայերին. Մի ուրիշ հեռագիր էլ հաղորդում է որ Շէյխ ուլ Իսլամը իր զօրաւոր կուսակիցներով միասին պահանջում է ընդհանուր քրիստոնէից ջարդ—ուպէսզի Եւրոպան ետ քաշվի Մակեդոնիայի կոնտրոլի ծրագրից, պարտաւորվելով զբաղվել ամբողջ Թուրքիոյ խնդրով, որը և պատճառ պէտք է լինի պետութեանց համերաշխութեան խորտակման.

Այս ամենից երեւում է թէ քրիստոնեաների կացութիւնը Թուրքիոյ մէջ շատ վտանգաւոր է. պարզ է որ հայերի վիճակը ամենից վտանգաւորն է.

Այս լուրերի հանդէպ Եւրոպան փոխանակ աւելի խիստ և վճռողական դիրք բռնելու՝ կարծես աւելի մեղմացել է. Նաւացոյցի խնդիրը բոլորովին ջուրն ընկածի պէս է երեւում. Սուլթանը յաղթանակում է դարձեալ. եթէ կոնտրոլը ընդունվի էլ, ո՞վ է իմանում թէ որչափ մեղմ, աննշան է լինելու.

Այսպէս թէ այնպէս Սուլթանի քրիստոնեայ կոտորելու ախորժակը գրգռում են. Ռուսիոյ սարսափելի կոտորածները կառավարութեան աջակցութեամբ, փառաւոր քաջալերութեան օրինակ են Սուլթան Համիտի և իր գործիքների համար. Արդէն մի հեռագիր կայ որ Սվվարիշ հայ գիւղում կրկին կոտորած և թալան է տեղի ունեցել.

Կոտորած Թիւրքիայում, կոտորած Կովկասում. Աւերում, թալան և գաղթում Թուրքիայում և նոյնը Կովկասում. Կարծես երկու կատաղած գազաններ խօսք մէկ են արել հային ջընջելու. ուրիշ ոչինչ. Կովկասում մի քիչ դիմադրող ուժ կայ և հնարաւորութիւն դիմադրելու, Թուրքիայում այդ էլ չըկայ. Լիբ չահամոլ Եւրոպան, Սուլթանը մինչեւ օրս պարարտացնողը, պոռնկային անտարբերութեան մէջ է, լուռ հանդիսատես մարդկային հեկատոմբների, որի նմանը վայրենի դարերում անգամ չեն պատահել.

Լուսաւոր, քաղաքակիրթ մարգարէ Եւրոպան!!! գտայ կ խօսքաչքակապութիւն և չարլատանութիւն, միամիտ ժողովրդներին աւելի լաւ հարստահելու համար ստեղծված մի տիտղոս.

Ուժ և ուժ է պէտք աշխարհում. վա՜յ ուժ չունեցողին, վա՜յ թոյլին.....

ՎԱՐԴՕ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Ը ԲԱԳՈՒՈՒՄ

Բագու. 21 հոկտ. եր ժամի 10–ին.

Սեւ ու մութ ազատութիւն. Բագուի ամենազօր ոստիկանութիւնն իր հովանաւորութեան տակ առած Բագուի ռուս բանւորականութեան տականքը, զանազան սրիկաներ, աւազակներ, արբեցողներ, խուլիգաններ, պետրովցիներ եւ այլ հայրենասէրներ այսօր ամբողջ օրը շրջեց Թուրքերի թաղում ջարդելով, հրկիզելով հայերի տներն ու խանութները. Մեր հարեւան Թուրքերը մի առանձին հաճութեամբ օգնում էին ռուս սրիկաներին, նրանք են, ինչ պէս ասում են, ազդանշան տուել հրդեհելու տները՝ վառելով եղբ. Միրզաբէկեանցների հոյակապ տունը. Դրան հետեւում է մի չտեսնուած հրդեհ. Այրւում էին հայերի՝ Փիրբուդաղեանի, Վարդանեանի, Ակունեանի, Շահգեդանեանի եւ այլոց տները, թուով 14 հատ: Զօրքերը ոչինչ ձեռք չառան եւ աւելի նպաստում էին սրիկաներին, խրախուսում եւ մասնակցում կողոպուտին. Երեկոյեան դէմ սրիկաները սկսեցին փշրել Թուրքերի թաղերին կից հայկական խանութները. փշրեցին եւ թալանեցին Արաֆելեանի, Պետրոսեանի, Աղամալեանի եւ այլոց յայտնի խանութները. Զօրքերը կից կանգնած դիտում էին այդ թալանը, դիտում էին եւ խրախուսում. Թուրքերի թաղերն անցնող հայերը այլ եւս չեն վերադարձել. Սպանուած են հայր և որդի Բեժանբէկեանները, քահանայ Խորխոռունին, նրա կառապանը եւ շատ ուրիշները. Մի ձիաքարշի կոնդուկտորի սպանել են հէնց նահանգապետի տան առջեւ. Բիբի–Հէյբաթում ռուս եւ Թուրք խուլիգանները կոտորել են հայ բանւորներին. Ոմանք հաշւում են Բիբի–Հէյբաթի կոտորածների թիւը 100, ոմանք—քիչ. Պիտի նկատեմ, Բիբի-Հէյբաթում հայերը օգոստոսից յետոյ մնացել էին միայն ոստիկանատան կից գտնուող բնակարաններում. Նրանք ազատուեցին Թուրքերի ձեռքից, հիմա ընկան ռուսների ձեռքով. Բալախանում գտնուող հայերի դրութիւնը անյայտ է. Այժմ Բայիլով համարւում է ամենավտանգաւոր կէտը, որովհետեւ այն տեղ բնակւում են խուլիգանների ղեկավարները՝ Պետրով, Մարչենկո, Կորոտկով և Արտամանով. Ռուս խուլիգանները մենակ անզօր կը լինէին ջարդեր առաջացնելու, եթէ չը լինէր Թուրքերի դաւաճան վարմունքը. Նրանք ամեն կերպ նպաստում են սրիկաներին եւ կողոպտում նրանց անունով. Սոցիալ դեմոկրատները ատամ են կրճտացնում խուլիգանների վրայ, բայց ինչ արած, երբ վերջիններս ունեն պաշտպաններ—զօրքը. Պարզ, որոշ նկատելի է, որ տեղական իշխանութիւնն էլ ոյժ չէ խնայում ոգեւորելու խուլիգաններին. Թէ ինչ կը լինի վաղը՝ մնում է անյայտ. Հայերը անչափ վրդովուած են. այժմ ունենք երեք թշնամի՝ իշխանութիւն, խուլիգաններ ու Թուրքեր. Արի եւ այսպիսի պայմաններում անզէն ձեռքերով նպաստիր Ռուսաստանի դեմոկրատիք շարժման. Թող մեր վրացի հարեւանները այդ չը մոռանան.

—

Ալէքսանդրապոլ, 10 հոկտեմբերի

Աւազակութիւնը սկսել է զգալի վտանգ սպառնալ մեզ.

Մի շաբաթ առաջ երեկոյեան լուր տարածուեց որ Արաքսի ափերից գալիս են դէպի մեր կողմերը մի աւազակային խումբ, ինչպէս ասում էին 26 հոգուց բաղկացած. Եկել թալանել էին Արաքսի այս կողմը Արաբի գիւղը եւ այն տեղից քայլ առ քայլ առաջ են գալիս դէպի Ալէքսանդրապոլ.

Լուրը ստացուելուն պէս, որովհետեւ ոչ տեղոյս ոստիկանն էր այնտեղ եւ ոչ գիւղի իւզբաշին, որոնք գործով գնացել էին Ուչարի կայարանը. հեռագրով նրանց իմացուեց, որոնք երեկոյեան գնացքով արդէն տեղս էին. Այնուհետեւ ամբողջ գիշերը ստրաժնիկները եւ տեղացի Թուրքերը զինուորուած պաշտպանութեան համար դուրս էին եկել գիւղից դուրս եւ բազարը.

Ամբողջ գիշերը սպասողական դրութեան մէջ էինք...

Սրանից յետոյ ամեն օր հատ ու կտոր տեղեկութիւններ էինք ստանում որ աւազակները քանի գնում թուով բազմանում են եւ այսինչ այն ինչ տեղերը յարձակւում են գործում.

Եկաւ այս տեղ եւ տեղւոյս գաւառապետը եւ կարծեօք յայտնել էր ու հարկն է, որ ուղարկեն Ալէքսանդրապոլ զինուորական պաշտպանութիւն, քանի որ անխուսափելի է Ալէքսանդրապոլին զերծ մնալ դրանց յարձակումից եւ թալանից.

Այս երեկոյ լուր տարածուեց թէ այդ աւազակախումբը՝ հրաձգութիւն է ունեցել Սաղիրի կայարանում, որ Ալէքսանդրապոլից դէպի Բագու առաջին կայարանն է.

Աւազակների գլուխն է անցած Մաշադի Իւսուֆ անունով փախստականը, որը յայտնի է գաւառումս իրան աւազակութիւններով եւ այս առաջին անգամը չէ, որ գալիս է այս կողմերը. Դեռ մի քանի տարի առաջ սա քիչ հոգս չէ պատճառել տեղոյս ադմինիստրացիային, որի ամեն ճիգ նրան բռնելու կամ սպանելու համար առ ոչինչ են անցել.

Այժմ այդ խումբը ոչ թէ 26 հոգուց է բաղկացած այլ 40, 40ից աւելի. որոնք բոլորն էլ լաւ հրաձիգներ են եւ քաջարի մարդիկ. Սրանց դիմաց, ինչպէս ասում են, 100 կոզակ բաւական չէ.

Ամեն օր նոր եւ նոր տագնապալից լուրեր են գալիս, բայց այժմ արդէն վտանգը մօտեցել է. ո՞վ գիտէ մինչեւ առաւօտ ի՞նչ կարող է պատահել (գրում եմ գիշեր). Մեր կեանքը ամէն րոպէ վտանգի է ենթակայ.

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Բ.

Այժմ խօսինք «ՀԱՅԵՆԻՔ»ի յօդուածների այն կտորների մա-

սին, որոնք վերաբերում են Կ. կոմիտէի, շրջանական ժողովի և իմ միջև եղած յարաբերութիւններին և դրամը չը յանձնելու խնդրին։

Նախ յայտարարենք որ իմ հրաժարման խնդիրը ես դեռ 1904ի գրեթէ կիսից եմ դրել, պատրաստ լինելով ամեն ինչ յանձնել իմ նախորդ ընկերներին և հրապարակով հրաժարվել, եթէ իմ բարոյական պահանջներին բաւարարութիւն չը տրվի։

Ահա թէ ինչպէս եղաւ այդ։ 1904 ի յուլիսին կազմակերպութեան գործերով ես գնում եմ Ռումանիա, դիւանի գործավարութիւնը յանձնելով Մարզպետունուն և Յ. Ադամեանին, որոնք մինչեւ իմ մեկնումը ոչ մի դժգոհութիւն չեն յայտնել ո և է իցէ խնդրի պատճառով, կազմակերպական գործերի տեսակէտով, մինչդեռ իրանք իրարու հետ չարունակ ընդհարումներ և կռիւներ են ունեցել և ես պարտաւոր վել եմ երկուսին էլ խըստիւ յանդիմանել։

Մանաւանդ խիստ յանդիմանութիւններ եմ արել Մարզպետունուն իր թեթեւ, անգաղտնապահ և պէրոյցում կատարած կռիւների և անկարգութիւնների համար, ու միանգամ էլ մերժել էր մի յիմար յօդուածը տպագրելու „Նարժում“ի մէջ։ Պարոնները այդ պատճառներով թշնամացել են ինձ հետ, բայց գաղտնի պահել, մինչեւ որ ես մեկնիմ։ Հեռանալուց յետոյ սկսել են իրենց դաւադիր գործունէութիւնը..... Ռումանիայից վերադառնալուց յետոյ տեսնում եմ որ Մարզպետունին, հէնց իմ Վառնա հասնելուց երկու օր յառաջ, թողել փախել է Ֆիլիպէ։ Այդ վարմունքը ինձ զարմացնում է։ Դիւանի անդամը առանց ոև է բացատրութեան թողել փախել է և տեղաւորվել Ֆիլիպէի Ռոստոմ—Պիօնեանի վարժարանում.. Զարմացնում է նաև Պիօնեանի Մարզպետունուն գըրկաբաց ընդունելը։ Հասկանում եմ որ մի ինտրիգ կայ, բայց որոշել չեմ կարողանում։ Յանկարծ նոյն օրերում դաշնակցականներից մէկը յայտնում է ինձ.— Վարդօ, Յ. Ադամեան և Մարզպետունի քեզ մեղադրում են Դաշնակցութեան փողերը վատնելու, Դաշնակցութեան անունը չարագործելու և բռնակալութեան մէջ։ Սակայն պատուիրել են որ գաղտնի մնայ, մինչեւ որ իրենք կարողանան հող պատրաստել քեզ դէմ ըմբոստանալու։

Ես անմիջապէս դաշնակցական մի քանի ընկերներից ժողով եմ գումարում հասկանալու թէ իմ բացակայութեան միջոցին դիւանի երկու անդամները ինչում են մեղադրել ինձ։ Եւ երբ պարզվում է, անմիջապէս դիմում եմ Ֆիլիպէում ապրող երկու անդամներին, յայտնում իմ դժգոհութիւնը դիւանի երկու անդամների մասին և այդ վիճակում այլեւս անհնար համարելով մնալ Կ. Կոմիտէի մէջ կամ շարունակել պաշտօն ինձ վրա պարտողների հետ, դնում եմ հետեւեալ պահանջները—կամ դուք եք կուսով Մարզպետանանուն պէտք է առնէք գաք այստեղ, որպէսզի ստուգենք և կարգադրենք խընդիրը, կամ Մարզպետունի և Ադամեան պէտք է հեռանան հակառակ պարագային ես հրապարակաւ կը հրաժարվեմ։ Ես իմ այդ պահանջը կրկնում եմ և ստանում մի նամակ Պիօնեանից և Երվանդից, որից քաղում ենք այդ խնդրին վերաբերեալ կըտորը։

24 սեպտ. 1904 Ֆիլիպէ

Ընկեր Վարդօին

. . . .

«Դուք Ղազար Ղազարեանը (Մարզպետունի) և Յակոբը (Ադամեան) կը մեղադրէք ամենատմր վարմունքի մէջ. կը պահանջէք որ մէկ շաբաթէն երկուքս միասին Ղազարը հոդ բերենք հարկ եղած բացատրութիւնները տալ առնելու և կարգադրութիւն ընելու համար։ Բայց կրնաք գուշակել որ մենք ալ հնարաւորութիւն չունինք ձեր այդ պայմանը կատարելու. որովհետեւ ո՛չ Ղազարը կրնանք առնել հոս բերել և ո՛չ մեր գործերը կը ներեն որ մենք գանք։ Եթէ Ղազարի և Յակոբի ձեր մասին մեզ յայտնած գանգատներու մասին կրնանք առ այժմ գրաւոր ալ խորհրդակցիլ։ Ուստի կը խնդրենք որ հաճիք մեզ յայտնել այդ ընկերներու վերագրած մեղքերը որպէսզի կարենանք մեր կարծիքը յայտնել։

Ձեր երկրորդ պայմանը թէ այդ երկու պարոնները պէտք է հեռանան չի կրնար մեր կողմէն ընդունուիլ, քանի որ չը գիտենք անոնց յանցանքը և մանաւանդ անոնք ալ ձեզ դէմ բողոքող են եղած աւելի առաջ. Յակոբը երեք անգամ է որ կը գրէ. տակաւին պատասխան չենք տուած. իսկ Մարզպետունին հոս գալուն սկսած է գանգատիլ և գրաւոր բողոքագիր մըն ալ տուած է (այս վերջին ձեւով իմ բողոքելուց յետոյ Մ. Վ.)

Գիտէք որ գալու հնարաւորութիւն չունինք. (չը գիտեմ ինչու Մ. Վ.) չէք ուզեր մեզ գրաւոր լուսաբանել, կը պահանջէք որ եթէ չը գանք յիշեալ ընկերները հեռացած համարենք առանց իրենց յանցանքը ճշդելու, այդ ալ եթէ չընենք կսպառնաք հրապարակաւ հրաժարելու։ Ատիկայ բաց է իրաց մեզի նեղը ձգել է. կը խնդրենք այդ ընկերներու մասին ձեր գանգատները կամ մեղադրանքը հաճիք մեզ գրաւոր յայտնելու. մեր ընկերական իրաւունքն է իմանալ. իսկ մեր կարծիքին դիմելու պարագային մենք ստիպուած չենք անպատճառ հոս գալու։

. . . .

Բարեւներով Երւանդ. Պիօնեան»

Գալու այս մերժումները ինձ վրայ տարօրինակ տպաւորութիւն են թողնում։ Ինձ մեղադրել են, պարզ շրջանակներում, իմ պաշտօնակից ընկերները, որ կազմակերպութեան դրամը վատնել եմ, որ գործերը բռնակալութեամբ եմ վարում, որ կազմակերպութեան անունը չարագործել եմ ի նպաստ ինձ. մեղադրողներից մէկը փախել է Ֆիլիպէ. ես այլեւս անհնար եմ համարում մնացած Ադամեանի հետ գործ վարել, կանչում եմ Ֆիլիպէի ընկերներին որ ամեն ինչ պարզվի, կա՛մ ես պատժվեմ կամ ինձ զրպարտող ընկերները, որոնք իմ ներկայութեանը ինձ դէմ ո՛չ մի բողոք չեն ունեցել և միայն բացակայութեանս միջոցին են սկսել զրպարտել։ Ու այդ յեղափոխա-

---

ՍԷՑԻԼԻԱ Մ. ՊԼԷՑՖ

27

ԴԷՖԻ

Հայկական Ռոման մը

(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ. ԺԷ.

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

Բացուածքէն կ'որ տակաւին... ձեռքերուս օգնութեամբ պատին քովէն զգուշութեամբ սողալ սկսայ։ Այլեւս չէի համարձակեր ուրիշ լուցկի գործածել. ունեցածս գրեթէ սպառած էր։ Որչին, կամ ինչպէս որ կը խորհէի, գնդանին շրջանը աւարտած կոնակս պատին կռթնցուցած էի՝ երբ յանկարծ լուսոյ ճաճանչ մը— իրապէս լուսոյ ճաճանչ մը երեսիս վրայ ինկաւ։ Հեռո՜ւն, ճիշդ իմ դէմս եղող նեղ անցքէ մը կուգար այդ. թէ ինչպէս նկատած չէի. չեմ կրնար ըսել։ Հոգիս լեցուեցաւ այն փոթորկայոյզ մոլեգին բերկրանքով ինչ որ հազար զգացած ըլլալու էր, երբ Աստուած ենոր աչերը բանալով՝ ծովի ալիքները ցոյց տուաւ։ „Ո՛հ, այդ օրհնեալ լոյսը“ գոչեցի, երբ յոգնութիւնս անցնելով, զուարթօրէն դէպի այդ լոյսը ուղղուեցայ։

«Ո՛հ. այդ օրհնեա՛լ լոյսը»։ Ա՛հ, եթէ հոն ի՛նչ տեսնելս գիտնայի. կը խնդրէի Աստուծմէ, որ իմ կանգնած տեղէս այդ լոյսը յաւիտեան անտեսանելի պահէր։

ԳԼ. ԺԸ.

ՎՃՌԱԺԱՄԸ ՀԱՍԱԾ Է

Նեղ ուղիղ անցքը երեւակայածէս աւելի երկար էր։ Վստահ էի թէ այդ վանքը այն տանող գետնափոր ճամբան էր, որ ներքին բնազդ մը ըսած էր ինձ թէ գոյութիւն ունի, եւ որն հակառակ՝ բացի կեանքէս ամեն ինչ արժելուն ինձ, վերջապէս գտած էի։ Մինչդեռ կը շարունակէի ճամբաս ինձ առաջնորդ ու նենալով անփոփոխ լոյսը, շատ մը խորհրդածութիւններ ու հարցեր արթնցան մտքիս մէջ։— Արդեօք ելքն ալ խուարակուռ մուտքին նմա՞ն է. կը խորհէի. արդեօ՞ք..." սակայն անօգուտ է հոս կրկնել այն բոլոր հարցերն ու պատասխանները, որոնցմով կը շարունակէի ճամբաս։

Տակաւին—որքան որ կրնայի եզրակացնել—կէսը չէի գացած, երբ լոյսը տակաւօրէն նուաղիլ սկսաւ ու վերջ ի վերջոյ անյայտացաւ։ Երեկոյ էր։ Այս չը խռովեց զիս։ Արահետը ա՛յնքան ուղիղ, ա՛յնքան հարթ էր, որ մութին մէջ ալ չէի կրնար սխալիլ։ Ուստի, անյողդողդ քայլերով յառաջացայ. առանց գիտնալու, սակայն, թէ որքան հեռու կամ մօտ էի ստորերկրեայ ճանապարհորդութեանս վերի ծայրէն։ Կէս ժամ խիզախօրէն քալած էի. և հիմա պէտք էր լոյսը եկող կէտին մօտ ըլլայի, երբ յանկարծ կենդանի բոցավառ շողիւն մը աչքերուս վրայ ժայթքեց. Ապա ուրիշ մը և երրորդ մը եւս. Ջահի բոցավառ լոյսի նմանութիւնը ունէր այդ։ Սակայն ջահ անկարելի էր գտնուիլ այստեղ, գոնէ ինձ այնպէս կը թուէր։ Պահ մը վերջը—ականջներս կը խաբէի՞ն զիս—վայնասունի քրքիջներու՝ վայրագ խնդուքներու և օրհասական հեծկլտուքներու ձայներ լսեցի մութին մէջ պահուելով պատին կծկուեցայ ու մտիկ ըրի բոլորովին մարմնովս դողդղալով։ Այո՛. այո՛, ականջներս խաբած չէին զիս— հառաչանքները աւելի բարձրացան, քրքիջները աւելի վայրագ դարձան. հառա՜չ մը—որ երկինք ճեղքեց ու ապա լռութի՛ւն... Ա՛հ. խե՛ղճ թշուառական մը մահուան դատապարտուած էր... Յանկարծ թանձր ծուխ մը անցքէն ներս խուժեց ու ամեն կողմը այրուած մարմնի հոտով ողողեց. Գարշեցուց, սիրտս խառնուեց. պատճառեց սակայն չը նուաղեցուց զիս։ Ընդհակառակը, բոլոր ջիղերս ամրապնդուեցան։ Աւելի և աւելի մօտեցայ բացուածքին, որ ջահին բոցերը կը ցուցնէին ինձ։ Անհաւոր կախարդանքով մը հմայուած, դեռ եւս կը մօտենայի այդ զարհուրելի կէտին։ Այժմ երեսս բացուածքին հետ հաւասար էր։ Առաւել ուրախառիթ պարագայի մը տակ, բարձրանալով կոտրտած սանդուխներէն, վանքի մատուռը մտած կ'ըլլայի։ Հո՛ն—ճիշդ դէմս կեցած էին ա՛յն սեղանին բեկորները որուն առջեւ Նախահայրս Աշոտ աղօթքներ ու աղերսներ մատուցած էր. հո՛ն, ատոր առջեւ պառկած էր ան խաչափայտը կուրծքին. բայց հիմա... հիմա...

Ջահերը այդ տաղտկալի ծուխին մէջ՝ չորս անկիւներ կանգնած, կախարդական լոյս մը սփռած էին մեռելատիպ տեսարանին վրայ։ Կարգ մը արիւնկզարկ թուրք զինուորներ, աւարտելով իրենց դիւային գործողութիւնը, զուարթօրէն կը վայրահաչէին ու կը խնդային, անփոյթ այն զարհուրելի տեսարանին, որ այժմ աչքերս վարժուելով ծուխին ու բոցին, կը պարզուէր ինձ։ Պատին կողմը նետուած, պառկած էր ամենավերջին զոհը։ Գրեթէ վիթխարի իրանով մարդ մըն էր ան, հուժկու կաշըմբռուռ ու զօրաւոր կազմով։ Դէմքը չը ճանչցուելու աստիճան աւրուած ու սեւցած էր, մատուըները, որպէս դժնդակ օրհասի մը արդիւնք, իրար պրկուած էին, իսկ զօրաւոր բազուկներուն ջիղերը չուանի նման իրար կապուած։ Աչքերս դէպի այդ

կանները մերժում են երես երեսի գալ, իրենց մեղադրանքները հաստատել, կազմակերպութեան դրամը և պատիւը փրկել։ Սակայն որպէսզի վերջը չը մեղադրվիմ թէ ես իմ պաշտոնները լոկ ձեւականութեան համար եմ դրել, և անհնար ու անբարոյականութիւն համարելով այդ տեսակ մեղադրանքների առաջ գործը շարունակել, ինքս եմ ճամբայ ընկնում Թիֆլիզ, պահանջելով որ Ադամեանին էլ հրաւիրեն։ Այդտեղ բացատրվում ենք......

Պիօնեան և Երուանդ իրենց անձեռնահաս են համարում մեր փոխադարձ մեղադրանքների մասին եզրակացութեան գալու, և առաջարկում են իսէր կազմակերպութեան այդ խնդիրները թողնել շրջանական ժողովին. դիւանը կրկին Վանում պահել հակառակ Մարզպետունու և Ադամեանին պահանջին Թիֆլիզ տեղափոխելու։ Այդ տեղ ես առաջարկում եմ թէ պատրաստ եմ հաւաքական պատասխանատւութեամբ բոլոր դրամները յանձնել Ադամեանին, քանի որ ինքը զինքը իբր շրջանական ժողովից ընտրված գանձապահ է հռչակում. թէեւ արձանագրութեան մէջ այդպիսի որոշում գոյութիւն չունի. ես մինչեւ հիմա միակ իմ պատասխանատւութեամբ դրան մեծ գումար յանձնել չէի կարող, մանաւանդ որ տուած գումարի հաշիւը երբէք չէ ներկայացրել. համաձայն եմ նաև որ դրամ և թէ նամակ ստանալու հասցէն էլ այդ պաշտօնին տրվի. այնպէս որ նա նամակագրութեան համար երբ պէտք ունենայ կարող է ինձ հրաւիրել իրեն օգնելու։

Սակայն ամբողջ կեդրոնական կոմիտէի կազմը չէ ընդունում իմ այդ առաջարկը. այլ որոշում է. մինչեւ այդ օրերը, այսինքն Նոյեմբերի վերջը եկած դրամները ինձ մօտ մնան. հասցէն էլ կրկին իմս մնայ. միայն այնուհետեւ, այսինքն եր ու ամսվան ընթացքում գալիք դրամները յանձնել Ադամեանին, նրանից մասնաւոր ստորագրութիւն առնելով ու ոչ մի քայլ չէ լինում իմ կասսան ստուգելու։

Այս բոլոր բացատրութիւնից պարզ է որ շրջանական ժողովից երկու ամիս միայն առաջ ես պատրաստ եմ եղել ամեն ինչ յանձնել և բոլորովին հրաժարվել. պատրաստ եմ եղել նաև ամեն ինչ յանձնել և միայն խորհրդակցի դեր կատարել Ադամեանին, առանց ոեւէ պատասխանատւութիւն ստանձնելու։

Այդ իրողութիւններից յետոյ էլ պարզ է որ մինչեւ Նոյեմբեր իմ մօտ գտնված յեղափոխական դրամները ողջ են եղել. ոչ ոք չէ ընդունել որ վատնված են. Շրջանական ժողովը տեղի ունեցաւ յունվարին և մինչեւ այդ վայրկեանին էլ ոչ ոք ստուգած չէ իմ կասսան, որ յանդգնէր ասելու թէ դրամները հալած էին. ...և չը նայելով Վանում գտնըված անդամակիցներիս բողոքին, կասսան ինձնից առնելու. հասցէն ինձնից խլելու, դիւանը Թիֆլիզ տեղափոխելու պահանջին և իմ պատրաստակամ առաջարկութեան ազատվելու այդ ամենից, դեռ շրջանական ժողովից երկու ամիս միայն առաջ, կրկին վստահվել է ինձ։

Ուրեմն դրամ չը յանձնվելու խնդիրը ստեղծվել է ուղղակի շրջանական ժողովի, նրա տուած որոշումների, ձեւի և բռնած դիրքի պատճառով։

Այդ մասին էլ կը խօսենք հետեւեալ անգամին։

ՎԱՐԴՕ

ՕԹԵԼԼՕ

Վաղը, հինգշաբթի գիշեր, Սաէտրինէնիէ սրահում պարոն Կ. Գալֆայեան վերջապէս պիտի ներկայացնէ Օթէլլօն որ զանազան պատճառներով այնքան յետաձգուեցաւ ու նիւթապէս և հոգեպէս վնասեց շնորհալի արւեստագէտին։

Պիտի ներկայացուի Օթէլլօյին չորս նշանաւոր տեսարանները որոնց միջոցով ամբողջովին երեւան կուգան միամիտ, խանդավառօրէն սիրող պատւախնդիր ու վրէժխնդիր արեւելցի արաբը և խորամանկ, ինտրիգան միջոցներու մէջ խտրութիւն չը դնող եւրոպացին։

Համլէտի մէջ Պ. Գալֆաեան ցուցուց որ ինք շնորքով դերասան է ու համոզուած ենք թէ նոյն վարպետութեամբ պիտի ցուցադրէ և Օթէլլօն։

Վանայի հայ հասարակութիւնը, որ թատրոն կը սիրէ ու միշտ հետաքրքիր է լուրջ բեմերու հանդէպ, անշուշտ պիտի բարեհաճի թատրոնը լեցնել գեղարուեստական և բարոյական հաճոյք մը ունենալու և նոյն ատեն արուեստագէտ մը քաջալերելու և յարգելու պարտականութիւնը կատարելու համար։

Արժանիքաւոր արուեստագէտ մը միշտ պիտի յարգուի իր ցեղէն և քաջալերուի որպէսզի կարենայ գեղարուեստին դրօշը բարձր բռնած յառաջադիմել, ու կը հաւատանք թէ Վանայի հասարակութիւնը պիտի կարենայ ցոյց տալ իր պարտականութեան գիտակցութիւնը դէպի մեր երիտասարդ ընդունակ և տաղանդաւոր դերասանը։

ԳԱՂԹՈՒՄ ԵՆ

—o—

Շուշի, 7 Նոյեմբերի

Այժմ, երբ համեմատաբար քաղաքս խաղաղ եւ ապահով դրութեան մէջ է քան հայ-թուրքական ընդհարումից յետոյ, և մանաւանդ Շուշի-Եւլախ ճանապարհը բաց է,—հայերը սկսել են մեծ խմբերով գաղթել քաղաքից դէպի Կովկաս և Ռուսաստանի աւելի ապահով քաղաքները։

Գաղթում են, ինչպէս կարողանում են։ Ամենասալոնական անձնաւորութիւններն անգամ, որոնք շարունակ քիթ էին վեր քաշում մեր դէլիժանսների վրայ, այժմ չեն խորշում և մի առանձին աշխուժութեամբ նստում են ֆուրգոնում և երկու օրուայ ընթացքում՝ փոշի կուլ տալով՝ հասնում են Եւլախ։

ապականիչ գոլորշիացումը յառած պահուս սիրտս բոլորովին խաղաղ էր

—Այդ սեւցած, եղուած ու խանձուած դէմքին մէջ, այդ զօրաւոր բազուկներուն կծկուած թելերուն մէջ, այդ պառկող վիթխարի իրանին դիմաստուերուն մէջ կար բան մը—դէմքի նմանութիւն մը, որուն ծանօթ ըլլալու էի։ Երկար տարակուսանքի մէջ չը մնացի, որովհետեւ թշուառականները մէկդի հրելով երկաթի կտորը, որու կցուած էին տակաւին զոհի մարմնին մասերը, սկսան իրենց ամենավերջին հրէշաւոր արարքին վրայ վճռել։

—Մուհամմէդի մօրուքը վկայ, ըսաւ թշուառական մը, խոզը բաւական դժուար մեռաւ, այնպէս չէ՞.

—Ան խոզ չէր—ան քրիստոնեայ չէր, ըսաւ ուրիշ մը։ Ան եկաւ ուրացող մը ձեռք տալու—թիւրք մը մեզի նման, որ հայ խոզերուն կօգնէր. Քեզ վստահեցնեմ որ վալիին հետ խռովութիւն պիտի ծագի մեր այս գիշերուան գործին համար։

—Ա՛հ, այ՛ անոր համար, ըսաւ առաջինը մատը խածնելով։ Միակ ցաւալին այն է որ մեր աշխատանքին համար փարա մըն ալ չառինք ու շատ դժուար ալ մեռաւ։

—Յաջորդ անգամ աւելի լաւ բախտ կունենանք։ Ան ծառան էր. երբ տէրը գայ... անհամբեր շարժում մը գործեցի։—Մարգարէին մօրուքը վկայ, ի՞նչ է այս։

Միւսները հեգնութեամբ խնդացին.

—«Մուկ է, մարդ. խորոված միսին համար կուգան կոր մուկերը... հա՛, հա՛...

—Ես այդքան վստահ չեմ, եւ հայհոյանքներով շարքով մը, ամենամօտ ջահին գնաց—Մուկ ըլլայ թէ ո՛չ, հեղ մը պիտի նայիմ։

Անկամայօրէն ձեռքս մէջքիս տարի. ընտիր խաղալիքներս հո՞ն էին... ի՞նչ պիտի փրկանք... Ժամանակը հասած էր, երբ մահը կեանքէն լաւագոյն էր. Մահը ընդգրկելու համար հօրս տուած խոստումս ու երդումս ոյժ տըւած էին ինձ. Բայց եւ այնպէս, առ այժմ մահը հարկաւոր չէր. Դուռը յանկարծական իրարանցում մը գիշերուն ուշադրութիւնը գրաւեց։ Շատ հաւանական է չարչարանքի նոր օրագիր մը հնարած էին.—«Քրիստոնեա՛յ մը, քրիստոնեա՛յ մը... խաչենք զանի...»

Այս բոլորը լսեցի. առնեք զիտած էի այնպիսի արտակարգ, մեսմեթական թմրութիւնով մը, որ չը կրնար բացատրուիլ, եւ որ, անոնք որոնք ցաւին էն ահաւոր խորութեանց մէջ թափանցած են, անոնք միայն կզգան այդ։ Սակայն հասած էր ժամանակը հիմա, երբ նոյն իսկ այս թմրեցուցիչ անզգայութիւնն ալ կազդուի, երբ ջիղ, գիտակցութիւն, տեսողութիւն եւ լսելիք երեւակացածէդ աւելի կը գրգռուի։

Խաչելութեան որոշումը թողուեցաւ. խաչի յարմար բան մը չէր գտնուած. չարչարանքի ուրիշ գործիք մը հարկաւոր էր հնարել։ Արիւնարբուները խորհրդակցեցան։ Շատ բաներ անկարող էի լսել, սակայն ականջներս խտացան իրենց լկտի խնդուքներով ու ցփրանքներով. Վերջապէս, բնականաբար, իրենց ծրագիրը որոշած ըլլալու էին, որովհետեւ մոլեգնոտ շտապով մը տանիքի միջին գերանին չըթայ անցընել սկսան ծայրը միսի ճանկ մը կցուած։ Աւարտելով այս, Իւրաքանչիւրը կարգով հաստատուն ըլլալը փորձեց. Մէկը ինքզինքը պողպատէ ճանկին անցուց, ու թողուց որ քանի մը րոպէ տանիքին եւ գետնին մէջտեղ կախուի. փորձը գոհացուցիչ էր. Թշուառականները հրացայտ տենջալից աչքերով յաջորդ տեսարանին կըսպասէին. ու ես, բոլոր զգայարաններս լարած, լայնաբաց աչքերով կը դիտէի ու կըսպասէի։

Բայց այսպիսի բուռն հետաքրքրութիւն մը չէր կրնար երկար տեւել. քնաբեր թմրութիւն մը ընկճեց զիս. պատին կռթնած գետին ինկայ ու մնացի հոն, անզգայ կեանքի, անզգայ մահուան. Երանի՛ թէ մահ ըլլար... Ափսո՜ս, դեռ ոչ. ուրիշ զարթնում մը եւս. Կանչուըռտուքներ, նզովքներ արթնցուցին զիս խաղաղ ներքինս. ոտքի ելայ ու մօտեցայ բացուածքին. հոն խճողուած էին հիմա. Եկած էր գինւորներու նոր խումբ մը, որ իրենց զոհը բերելով մսի ճանկին տակը կը քաշկռտէին զայն։ Մինչ կը բերէին, գինւորներու մեծամասնութիւնը մէկ կողմ քաշուեցաւ. Տեսայ—ո՜վ երկինք, ի՛նչ կը տեսնէի... Արքայական կազմ մը տեսայ, գամերէ շինուած սաղաւարտ մը գլխուն, որմէ արիւնի կաթիլներ երեսէն վար կը գլորէին. Տեսայ պերճ կերպարանք մը, մինչեւ մէջքը մերկ, ուրկէ արքայական թաւիշին կտորները տակաւին կախուած էին, ծակուած վէրքերէն արիւնը առատօրէն հոսելով. Տեսայ, ո՜հ, Աստուա՛ծ, չորս ուժեղ թշուառականներ, որ արիւնլուայ գանակոծեալ մարմինը ճանկին անցնել կաշխատէին. Այլեւս ուրիշ բան չը տեսայ... Վայրենի ճիչով մը անոնց մէջտեղ նետուեցայ. «Հա՛յր իմ, ո՛հ, հայր իմ...»

(Շարունակելի)

Այդպէս է մեր քաղաքի սարսափի և աւերակ տների չափազանց ծանր տպաւորութիւնը:

Եւ այդպիսով գաղթում է ունեւորը և չունեւորը տնատէրը և ո՛չ տնատէրը,, վաճառականն ու արհեստաւորը: Գաղթում է նա՛, ով շատ հեշտութեամբ կարող է ապրել ուրիշ քաղաքներում, բայց և գաղթում է նա, ով զրկուած է ամեն ինչից և ամբողջ յոյսը դրել է իր բազկի վրայ՝ թէ իրան և թէ իր բազմամարդ ընտանիքը կերակրելու համար։

Հաստատապէս կարելի է ասել, որ գաղթել են համարեա բոլոր ունեւոր և միջին դասակարգերը: Մնում են, ուրեմն ստորին (արհեստաւոր և բանւոր) դասակարգերը, որոնք առանց ունեւորների գոյութիւն ունենալ չեն կարող, որովհետեւ ունեւորն է գլխաւորապէս նրանց աշխատանք, գործ, ապրելու միջոց տալիս: Մարգարէ չպէտք է լինել գուշակելու համար, որ վաղը, միւս օրը այդ դասակարգերն էլ, աշխատանք չը գտնելու պատճառաւ, դիմեն օտար քաղաքները։ Այդպիսով, ուրեմն, քաղաքս բոլորովին կը ամայանայ։ Սակայն երբէք չպէտք է մոռացութեան տալ այն հանգամանքը, որ հայ-թուրքական ընդհարման ժամանակ ինքնապաշտպանութեան դերի մէջ էին միայն աշխատաւոր դասակարգերը։ Հետեւաբար, ի՞նչ կը լինի քաղաքի դրութիւնը, երբ նրանք էլ թողնեն և ուրիշ տեղ աշխատանք ունենան։

Քաղաքիս մնացած հայերից ոմանք, նկատի ունենալով այդ խայտառակ եւ քայքայիչ գաղթը, մտածում են դրա առաջն առնել (միշտ հայը ուշ է մտածում) Եւ ահա, ըստ Շուշեցու տրամաբանութեան, գործի են կըպչում։ Ամենից առաջ այդ պարոնները չինծու լուրեր են տարածում, որ իբր թէ ճանապարհները անապահով են, եւ այդ ուղղութեամբ որոշ յաջողութեան հասնում են. գաղթողները մի քանի օր յետաձգում են իրանց չուն եւ յարմար առիթ են որոնում երբ այստեղից որ եւ է պատճառով զօրք է ուղարկւում Եւլախ, որոնց հետ եւ գնում են։

Իսկ յետոյ, բոլորովին նորերս, 4–5 հոգուց բաղկացած մի խումբ մտնում են տները եւ յայտնում, որ արգելւում է (!) հեռանալ քաղաքից, որ չի կարելի քաղաքը դատարկել, եւայլն. Բայց երբ գնացողները վճռողականապէս յայտնում են, որ անպատճառ պէտք է մեկնեն, այն ժամանակ այդ պարոնները դիմում են վերջին, իբր թէ, խիստ միջոցին—փող են պահանջում «քաղաքի կարիքների» համար։

Բայց մի՞թէ միայն փողով կարելի է քաղաքը փրկել ապագայի չարիքներից։

ԽՈ ԼԻԳԱՆՆԵՐԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱԳՒՈՒՄ

—)o(—

Բագու, 21 Հոկտ.

Երէկ առաւօտուանից մի խումբ խուլիգաններ ու կոյր հայրենասէրներ ազգային դրօշակներով ու կայսեր պատկերով շրջեցին փողոցները։ Խուլիգանական կողմը, գլուխ ունենալով յայտնի Պետրովին. Բիբի-Հէյբաթից եկաւ, ընդհանուր նահանգապետի տան առաջ կանգնեց։ Ընդհանուր նահանգապետը դուրս եկաւ և ողջունեց ամբոխին մի կարճ ճառով։

Քաղաքային տան առաջ խուլիգանները մի խարոյկ կազմեցին և բոլոր կարմիր դրօշակներն այրեցին։ Տեղ տեղ ծեծեցին կարմիր դրօշակ կրողներին և ամեն ջանք գործ էին դնում որ և է ընդհարում առաջ բերել հայերի կամ հրէաների հետ։ Ամեն տեղ, թէ հայերը, թէ հրէաները և թէ ռուս գիտակից բանւորութիւնը խուսափում էին այս ցուցարարներից։ Այդ միջոցին Օև քաղաքում շրջում էր կարմիր դրօշակներով ռուս բանւորների մի ստուար խումբ՝ սօցիալդէմօկրատներ։ Խուլիգանները քաղաքային տնից շարժուեցին դէպի մայր եկեղեցու բակը, ուր նրանց սպասում էր մի խայտաբղէտ ամբոխ, բաղկացած ռուս խոհարարներից, լակէյներից, դռնապաններից ու զանազան բիւրօկրատական հիմնարկութեան ստորին ծառայողներից, Կոզակներն աչքի էին ընկնում իրանց բռնած թշնամական դիրքով դէպի հայերը, և խրախուսում էին խուլիգաններին։ Ժամը 4-ին խուլիգանական ցոյցը իր գագաթնակէտին հասաւ։

Տօրգովայա փողոցով անցնելիս մի քանի տեղ, կարմիր դըրօշ կրող տների վրայ յարձակուեցին և տան տէրերին հայհոյեցին։ Սագաթէլեանի տան առաջ տեղի ունեցաւ մի դէպք, որ չարագուշակ բնաւորութիւն ստացաւ։

Իբր թէ այդ հայերը կրակել են ամբոխի վրայ և ռումբ են գցել տան չորրորդ յարկից։

Բոլէապէս թնդանօթներով շրջապատեցին Սագաթէլեանի տունը և ռմբակոծեցին տան վերին երկու յարկերը, փշրելով ամեն ինչ։ Այդտեղ մարդկային զոհեր չկային։

Զինուորներն ու կոզակները, քարուքանդ արին Մելիքեանի լուսանկարչական դահլիճները, շատ բաներ կողոպտեցին կոզակները։ Թնդանօթ արձակելիս, խուլիգաններն ուռա՛ էին գոռում։

Քաղաքի զուարթ պատկերը փոխուեց. ամեն կողմերից հիւանդանոց էին տանում դիակները ու վիրաւորներին։ Տարածուած լուրերին նայած, կոզակները հայկական ջարդ վաղուց էին պատրաստում այստեղ։

Մի քանի տեղերում կառքերով անցնող հայերին զինուորներն ու կոզակները հանել են կառքից ու սպանել։

Թուրքերը իսկոյն հեռացան հայկական թաղից, կարծելով թէ դարձեալ թուրք հայկական ընդհարում կայ։ Նամակս գրելիս, լսում եմ հեռախօսով, որ խուլիգանները Նիկոլաևսկայա փողոցում կրակել են և թալանում են Միրզաբէկեանի տունը։ Դրութիւնը կրիտիքական է. զօրքերը շատ վատ են տրամադրուած հայերի վերաբերմամբ։

Ի՞նչ կը լինի այս բոլորի վերջը մի այնպիսի քաղաքում, ուր մի կողմից թուրքերը և խուլիգանները, իսկ միւս կողմից էլ ոստիկանութիւնը, զինուորներն ու կոզակները թշնամական դիրք են բռնել դէպի հայերը և պատրաստ են ամեն մի րոպէ իրանց վայրենի ու արիւնռուշտ բնազդներին սանձարձակ ազատութիւն տալ։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն կը հաղորդեն որ Ցէհմի փաշան Սուլթանի հրամանով սնային բանտարկութեան ենթարկուած է, որովհետեւ կասկածներ կան իրեն վրայ նետուած ռումբը օյինպազութիւն մը եղած է իր կողմէն։

— «Վէչէրնա Բօչթա» թերթին մասնաւոր թղթակիցը նոյեմբեր 7ին կը հեռագրէ հետեւեալը. Պ. Նիքօլաև Ռուսիոյ դեսպանատան թարգմանը, ինչպէս նաեւ ֆրանսականը Պ. Լէտուլուքս եւ Աւստրիականը Պ. Պիլինսքի, անցեալ շաբաթ օրը մեկնեցան Բիրէա գտնուելու համար ամիրալներու տրամադրութեան տակ որոնք պաշտօնը ունին իրենց նաւաբաժիններով նաւային ցոյցը ընել եւ թրքական հող գրաւել եթէ Թիւրքիան մերժէ Մակեդոնիոյ ելեւմտից քոնթրոլը ընդունիլ:

Թարգմաններուն կատարելիք գործին էական մասը գաղտնի կը պահուի։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն Նոյմ. 6ին կը հեռագրեն թէ լուր կը պտըտի որ Բեթերհոֆի մէջ նախարարական արտակարգ նիստ մը տեղի ունեցեր է Ցարին նախագահութեամբ. Ներկայ եղեր է եւ կոմս Սօլսկին.

Նախարարապետ Վիթէ յայտարարած է որ հոկտ. 17ի մանիֆէստով տրուած 5 ազատական օրէնքները արդէն մշակուած են եւ շուտով պիտի յայտարարուին. Ցայտարարած է նաեւ որ գործաւորներում ուրիշ ընկերութիւններու կուսակցութիւնը կը շարունակէ խոչնդոտ հանդիսանալ պետական կեանքի կանոնաւոր ընթացքին. Գործադուլներէն ելլող սուտերով լի կոչերը եռանդով կը տարածուին և հանրային խաղաղութեանը կըսպառնան.

Ասկէ վերջը կարդացուեր է կառավարութեան բացատրութիւնը, որուն եզրակացութիւն այն է թէ ոչ միութիւններու «Միութիւնը» եւ ոչ ուրիշ ո եւ է կազմակերպութիւնը չի կրնար 70 միլիոն ռուս ժողովուրդին, որ պետութեան կորիզը կը կազմեն, ներկայացուցչութեան մանտատը ընդունիլ։

ԹԱՏՐՈՆ ՍՕԼԷՏԻՆԷՆԻԷ

—o—

ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

—)o(—

Վաղը, հինգշաբթի գիշեր ժամը ճիշդ 9 կէսին, ծանօթ Ալբերգու արուեստագէտ Պ. Կ. Գալֆաեանը մասնակցութեամբ Տիկ. Ցասուլեաճեանի եւ Պ. Տ. Գալէմճեանի պիտի ներկայացնէ

ՕԹԵԼԼՈՅԻ

Նշանաւոր 4 տեսարաններ հեղինակութիւն Շէքսփիրի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Վարագոյրը պիտի բացուի անպատճառ ժամը ճիշդ 9 1/2ին առանց նկատի առնելու հասարակութեան ներկայ չըլլալը։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ցիլիպէ Իքսին. — Ընդունեցինք Ձեր նամակը. մանկլաւիկներու հացկատակներու օյինները կը նկարագրէք մեզի։ Այդ ամենը մեզի ծանօթ են. մեր պայքարը այդ ողորմելիներուն հետ չէ։ Մենք առանց ջիջերը կարգի բերելու կաշխատինք, առանց հաց տւողներու, յեղափոխական սեղանէն բաժին հանողներու հետ է որ կը մաքառինք։ «Հայրենիք»ը գրեր է. շատ լաւ, մեր ուզածն ալ այդ էր. գրեր է եւ կստանայ պատասխանը. Դուք ձեր պաղարիւնութիւնը մի կորսնցըներ, մի յուզուիք։ Սպառնալիքներուն ալ կարեւորութիւն մի տաք։ Կուզեն ծեծել—դուք ալ ծեծեցէք։ Ընդունեցէք ակն ընդ ական սկզբունքը. Դիմացնիդ գտնուածները վատեր են. եւ վարվեցէք տ՛յնպէս, ինչպէս պէտք է վարուիլ վատերու հետ։ Եթէ «Շարժում»ը լիցնենք այդ փոքրիկ ծառաներուն վերաբերեալ գործերովը, մեծերով զբաղելու տեղ չիմնար։ Մինչ դեռ մեծերն են որ գործերը այս դրութեան հասցուցած են։ Գործիքը այնքան մեղք չունի, գործիքը գործածողները պէտք է ջախջախել։ Շընորհակալ ենք Ձեր գրութիւններուն համար. թէեւ չենք տպագրեր, բայց կօգտուինք. որովհետեւ տեղեկութիւններ կստանանք։

Ի գիտութիւն հայ հասարակութեան պատիւ ունինք ծանուցանել թէ տօղս գտնուող երկու խումբերը Հայկական ԱՐԱՔՍ Նուագախումբը Երգեցիկ եւ Մարզիկ խումբ որոնք մինչեւ հիմակ անջատ կը գործէին, այժմ սեպտ. ամիսէն ասդին միացած ըլլալով, «Հայկական ԱՐԱՔՍ Նուագախումբ» անուան տակ մասնաւորապէս պիտի շարունակեն նուագը (մանտօլին Օրքէսթրան) Երգեցողութիւնը եւ Մարմնամարզը

Վարչութիւն
Հայկական ԱՐԱՔՍ Նուագախմբի
29 Հոկտ. 1905
Ռուսճուք

Печатница на U. Глушковъ иВарн С-ие,